Կարգապահական գործ թիվ 17097

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի ապրիլի 07-ի թիվ 89-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/68-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՅԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արայիկ Պապիկյանին (արտոնագիր՝ 970) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

09.08.2017թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ՝ նաև Դատարան կամ Դիմող)** դատավոր Ա. Գաբրիելյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 03.08.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017 թվականի օգոստոսի 3-ին, դատական նիստը բացված համարվելուց անմիջապես հետո Դատարանին է հանձնվել «Արձանագրություն, անձին զննության ենթարկելու մասին» վերտառմամբ գրություն, համաձայն որի, նույն օրը դատական նիստը սկսվելուց անմիջապես առաջ, դատական կարգադրիչ Լ.Մալխասյանը, ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ցանկացել է զննության ենթարկել նշված գործով պաշտպան Արայիկ Պապիկյանին, ով հրաժարվելով ներկայացնել մոտն առկա իրերը, որոնք հատուկ նախատեսված ստուգիչ սարքի կողմից ազդանշան են տվել, հրաժարվել է դատարանի վարչական շենք մուտք գործելուց և ըստ էության դատական նիստին մասնակցելուց:

Նշված արձանագրության վերաբերյալ գրավոր հայտարարությամբ է հանդես եկել պաշտպան Արայիկ Պապիկյանը հայտնելով հետևյալը՝ *Հարգելի դատարան,հուսով եմ Դուք ցանկություն ունեք անցկացնել արդյունավետ դատավարություն, հուսով եմ, որ Դուք ցանկություն ունեք բարձր պահելու դատարանի հեղինակությունը: Եթե ճիշտ եմ, ապա*

խնդրում եմ օգտվեք Ձեր իշխանությունից, ինչով օժտված եք օրենքի ու սահմանադրության ուժով, և թույլ մի տվեք, որ օրենքից դուրս և կամայական միջամտությունը, որը ցուցաբերվում է կարգադրիչի կողմից, խաթարի գործընթացը, Ձեր և դատարանի հեղինակությունը: Ձեռնպահ մնացեք կրավորական դիրքորոշումից, և վարքագծից, և մեկ նշի, թե իբր սա Ձեզ չի առնչվում և Դուք չեք կարող միջամտել: Դա պատիվ չի բերում դատարանին և Ձեզ:

Երբ սույն արձանագրությունը կընթերցեք և կհեռանաք խորհրդակցական սենյակ՝իմ իմ նկատմամբ հերթական սանկցիան կիրառելու, ապա խորհեք և ինքներդ Ձեզ հետ խորհրդակցեք՝ ինչ «արդյունավետ» աշխատանք եք կատարում:

Դատարանը, Որոշմամբ վկայակոչելով նշված փաստական հանգամանքները և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՔԴՕ) 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 2-րդ մասի 8-րդ կետը, 5-րդ մասը, 73-րդ հոդվածի 2-րդ մասը, 5-րդ մասը, 314.1-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերը, ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ և 214-րդ հոդվածները, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 4.1 կետը, գտել է, որ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 03.08.2017թ դատական նիստի ընթացքում փաստաբան Արայիկ Պապիկյանն իր դատավարական իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն և առանց հարգելի պատճառի՝ չի կատարել իր դատավարական պարտականությունները, ինչով խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքին՝ անհարգալից վերաբերմունք դրսևորելով Դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Դատարանը գտել է, որ Արայիկ Պապիկյանի նկատմամբ պետք է կիրառվի դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ՝ հիմք ընդունելով Արայիկ Պապիկյանի դրսևորած վարքագիծը, և այն փաստը, որ վերջինս իր գործողություններով ակնհայտ անհարգալից վերաբերմունք է դրսևորել Դատարանի նկատմամբ, այն, որ հրաժարվել է զննվելուց և առանց հարգելի պատճառների չի ներկայացել դատական նիստի:

Դատարանը 03.08.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է ամբաստանյալ Գևորկ Իրիցյանի պաշտպան Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու համար դիմել փաստաբանական պալատ:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 07.09.2017թ. թիվ 271-Ա/ԿԳ-17097 որոշմամբ փաստաբան Արայիկ Պապիկյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենքի)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

12.09.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Վիկտորյա Կիրակոսյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված էր նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը գրավոր բացատրություն չեն ներկայացրել: Խորհրդի նիստին Պատասխանողը չեն ներկայացել, թեև պատշաճ ծանուցված են եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Նախապատրաստողը 13.11.2017թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 15.11.2017թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 07.04.2018թ. ժամը 15:00-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

***Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը,* հաստատված է համարում հետևյալ փաստը.**

- Թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 03.08.2017 թվականի դատական նիստին փաստաբան Արայիկ Պապիկյանը ներկա չի գտնվել: *Նշված փաստը հաստատվում է Որոշմամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արայիկ Պապիկյանը փաստաբան է հանդիսանում 24.10.2009թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 22 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (14 ավարտված վարույթ և 8 ընթացիկ վարույթ), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական վարույթը:

Խորհրդի 06.02.2017թ. թիվ ԿԳ/25-Ա, 11.05.2017թ. թիվ ԿԳ/51-Ա, 12.09.2017թ. թիվ ԿԳ/86-Ա, 26.10.2017թ. թիվ ԿԳ/97-Ա, 07.03.2018թ. թիվ ԿԳ/47-Ա, 20.03.2018թ. թիվ

ԿԳ/56-Ա, 05.04.2018թ. թիվ ԿԳ/60-Ա որոշումներով Արայիկ Պապիկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

Խորհրդի 13.02.2018թ. թիվ ԿԳ/14-Ա որոշմամբ Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ մտած չէ:

Խորհրդի 13.02.2018թ. թիվ ԿԳ/15-Ա որոշմամբ Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն Կանոնագրքի 3.1.6. և 3.5.1 ենթակետերի և 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ մտած չէ:

Խորհրդի 07.03.2018թ. թիվ ԿԳ/48-Ա որոշմամբ Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ մտած չէ:

Խորհրդի 15.03.2018թ. թիվ ԿԳ/51-Ա որոշմամբ Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ մտած չէ:

Խորհրդի 15.03.2018թ. թիվ ԿԳ/52-Ա որոշմամբ Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ մտած չէ:

Խորհրդի 03.04.2018թ. թիվ ԿԳ/60-Ա որոշմամբ Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար,որոշումն ուժի մեջ մտած չէ:

Խորհրդի 05.04.2018թ. թիվ ԿԳ/65-Ա որոշմամբ Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար,որոշումն ուժի մեջ մտած չէ:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի Արայիկ Պապիկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Կարգի 4-րդ հոդվածի համաձայն՝ *կարգապահական վարույթն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:*

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:* **Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** *եթե կողմը հրաժարվում է (խուսափում է) պատասխանել Նախապատրաստողի հարցերին կամ բացատրություններ տալ, ապա Նախապատրաստողը մյուս կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է անհիմն համարել կողմի հրաժարվելը (խուսափելը) պատասխանից և բացատրություններից, իսկ գործի այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ կողմը հրաժարվում (խուսափում) է բացատրություն կամ պատասխան տալուց, կարող է համարել ապացուցված: Ամեն դեպքում պատասխանից կամ բացատրությունից Նախապատրաստողի կողմից որպես անհիմն գնահատված հրաժարումը (խուսափումը) մեկնաբանվում է ի վնաս հրաժարվողի (խուսափողի): Սույն կանոնը կարող է կիրառել նաև Պալատի խորհուրդը:* **Նույն հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝** *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Վերոնշյալ կանոններից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն ընթանում է դիմողի և պատասխանողի մրցակցության սկզբունքի հիման վրա, և վերջիններս կենտրոնական տեղ են զբաղեցնում ապացուցողական գործընթացում: Դիմողի և պատասխանողի կողմից ներկայացվող ապացույցների օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման և վերլուծության հիման վրա է Խորհուրդը կայացնում գործն ըստ էության լուծող որոշում՝ համապատասխան իրավական եզրահանգման գալով պատասխանող փաստաբանի կողմից փաստաբանական էթիկայի կանոնների խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ:

Խորհրդի կողմից պատասխանող փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառման հիմքն իրենից ներկայացնում է գործով ներկայացված ապացույցներով հաստատված փաստական հանգամանքների այնպիսի համակցություն, որը ողջամիտ համոզմունք է ձևավորում Խորհրդի մոտ փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Կանոնագրքի պահանջների խախտման վերաբերյալ:

Կարգապահական պատասխանատվության հիմքը չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք կվկայեն փաստաբանի կողմից կարգապահական խախտման կատարման մասին: Կողմերից յուրաքանչյուրը կրում է իր պնդումները հիմնավորելու և դրանք հաստատող ապացույցները Պալատին ներկայացնելու պարտականությունը, որը ոչ պատշաճ կատարելու դեպքում կրում է նաև դրա բացասական հետևանքները՝ կարգապահական գործի իր համար ոչ բարենպաստ իրավական ելքի ձևով: Իսկ Պալատը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանիորեն ուսումնասիրելով և գնահատելով կողմերի ներկայացրած ապացույցներն ու փաստարկները, կայացնում է պատճառաբանված որոշում:

Սույն դեպքում Դիմողը Պատասխանողին վերագրում է ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 03.08.2017թ. դատական նիստին, առանց հարգելի պատճառի չներկայանալու վարքագիծը, որը հիմնավորելու համար Դիմողը դատական սանկցիայի որոշման մեջ հիշատակում է դատական կարգադրիչ Լ.Մալխասյանի կողմից կազմված անձին զննության ենթարկելու վերաբերյալ արձանագրությունը այն մասին, որ դատական

կարգադրիչը ցանկացել է զննության ենթարկել Արայիկ Պապիկյանին, սակայն վերջիններս հրաժարվել է:

Խորհուրդն արձանագրում է, որ Դիմողի կողմից ներկայացված դատական սանկցիայում նշված արարքները չեն համապատասխանում Պատասխանողի կողմից կատարված արարքին, քանի որ Դատական սանկցիայում նկարագրված արարքները և օրերը սխալ են շարադրված: Մասնավորապես դատական սանկցիայի մասին որոշման մեջ նկարագրվում է պաշտպան Նինա Կարապետյանցի վարքագիծը հուլիսի 20-ին դատական նիստում, այնուհետև դատական սանկցիայի վերջում հիշատակվում է Արայիկ Պապիկյանի վարքագիծը:

Հետևաբար, Դիմողի կողմից վկայակոչված հանգամանքները՝ այն, որ Պատասխանողը առանց որևէ հարգելի պատճառի չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնի կանչով՝ համարվում են չապացուցված:

Վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ, Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ չի հիմնավորվել Պատասխանողների կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջները խախտելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արայիկ Պապիկյանի (արտոնագիր՝ 970) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան

07 ապրիլի 2018թ.
թիվ ԿԳ/68-Ա
ք. Երևան